Հ Ր Ա Մ Ա Ն

04 հոկտեմբերի 2023թ. Թիվ 329-L
ք. Երևան

ԳՆԱՆՇՎԱԾ ՓՈԽԱՐԺԵՔՆԵՐՈՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կանոնադրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ս.թ. հոկտեմբերի 4-ից Բանկի Հաշվարկադրամարկղային գործառնությունների սակագնի 35-րդ կետով սահմանված՝ Բանկի կողմից գնանշված փոխարժեքներով իրականացվող արտարժույթի առքի կամ վաճառքի գործարքների գումարի մեծությունը սահմանել 25,000 (քսանհինգ հազար) դոլար կամ դրան համարժեք այլ արտարժույթ:

2. Վերոնշյալ գումարից ավել գործարքների իրականացման դեպքում՝ Բանկը արտարժույթի առքի կամ վաճառքի գործարքները կարող է իրականացնել պայմանագրային սկզբունքով՝ Բանկի հայեցողությամբ և Բանկի կողմից որոշված փոխարժեքով:

3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել 03.10.2023թ. թիվ 319-L հրամանը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Hakob Andreasyan Digitally signed by Hakob Andreasyan Date: 2023.10.04 16:32:26 +04'00' Հակոբ Անդրեասյան